ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Խառնարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասի հանքի փակման ծրագիր» նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

06. 08. 2025թ Կարենիս բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. օգոստոսի 6-ին, ժամը 11:00-ին Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասի հանքի փակման ծրագիր» նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամներ Նորայր Վարդանյանն ու Ավետիք Պետրոսյանը, համայնքի ղեկավարի օգնական Անատոլի Գասպարյանը, Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Բալաբեկյանը, նույն բաժնի աշխատակից Արթուր Փանոյանը, Կարենիս բնակավայրի վարչական շրջանի ներկայացուցիչ Արմինե Դավթյանը, «Խառնարան» ՍՊԸ-ի տնօրեն Սերգեյ Ավանեսյանը, «Տրիզեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ռուբեն Վարդանյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 40 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, փակցվել է մարզպետարանի, Չարենցավանի համայնքապետարանի շենքում փորձաքննական կենտրոնի և համայնքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները:

Գոհար Մինասյանն անդրադարձավ մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներին, անդրադարձավ ռեկուլտիվացիոն աշխատանքներին, ներկայացրեց որ ընկերությունը 18.07.2025թ.-ի դրությամբ գանձապետական հաշվեհամարին իրականացրել է 601.50 հազ. դրամ վճարում: Ուստի անհրաժեշտ է հանքի փակման ՇՄԱԳ փաթեթով վերջնական խախտված հողերի համար հաշվարկված գումարից հանել ընկերության կողմից վճարված գումարը (601.50 հազ.դրամ), Խոսքը փոխանցվեց նախաձեռնող կողմի ներկայացուցիչ՝ «Տրիգեր» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռուբեն Վարդանյանին, ով ներկայացրեց վերոնշյալ դիտողությունների վերաբերյալ պարզաբանումներ: Ներկայավեց, որ Կառավարության որոշման համաձայն ընթացիկ հատկացումները կատարվում են պայմանագրով ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար սահմանված վճարումների ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար, բացառությամբ պայմանագրի գործողության ժամկետի վերջին տարվա, պայմանագրով սահմանված ժամանակացույցով նախատեսված ժամկետներում: Ընկերությունը շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին պարտավոր է վճարել ընդերքօգտագործման N ՊՎ-052 պայմանագրով նախատեսված գումարը և ոչ ավելին: Ընկերությունը շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին պարտավոր կլիներ հավելյալ վճարումներ կատարել միայն այն դեպքում, եթե փակման ծրագրով հաշվարկված գումարը ավելի քիչ լիներ քան ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված գումարը: Հանքավայրի փակման ծրագրում հաշվարկված 5640528.6 դրամ գումարը ընկերությունը կհատկացնի փակման ծրագրով նախատեսված միջոցառումներին: Հարկ է նշել, որ ավել ծախսվող գումարը միայն կբարելավի ռեկուլտիվացիոն աշխատանքների որակը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները միաձայն որոշեցին հավանություն տալ «Խառնարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասի հանքի փակման ծրագիր» նախատեսվող գործունեությանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«Խառնարան» ՍՊԸ-ի տնօրեն Սերգեյ Ավանեսյան